# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2021 թվականի --------------------- -ի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 3-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ. «Կազմակերպություններին տրամադրված սուբսիդիայի ֆինանսական տարվա արդյունքներով խնայողությունները կարող են ուղղվել ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերմանը՝ սուբսիդիայի պայմանագիր կնքող պետական մարմնի թույլտվությամբ:»,

2) 6-րդ կետում «նախարարության հետ» բառերից հետո լրացնել «, եթե ավելի բարձր իրավական ուժ ունեցող իրավական ակտով դրանք սահմանված չեն» բառերը,

3) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կազմակերպությանը սուբսիդիա հատկացվում է բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչ (ԲՍԿ) հանդիսացող պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա, ընդ որում, պետական մարմնի անունից սուբսիդիայի պայմանագիրը կնքում է մարմին գլխավոր քարտուղարը կամ աշխատակազմի ղեկավարը:»,

4) 8.1-րդ կետում «տվյալ ոլորտը կարգավորող պետական մարմնի ղեկավարի կողմից» բառերը փոխարինել «պայմանագիր կնքող պետական մարմին գլխավոր քարտուղարի կամ աշխատակազմի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի միջև» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: